№ 17 ԹԷՀՐԱՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՅԻՍ 8

1896

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Թ[...] ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՅԻՍ 8 № 17

# ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Հրատարակւում է ամեն չորեքշաբթի օրերը

Տարեկան գինն է Թէհրանում 12 ղռն. վեցամսեան 6 ղ. Պարսկաստանի օտար քաղաքները 15 ղ. վեցամսեան 8 ղ. Ռուսաստան 3 րուբլի. վեցամսեան 2 րուբլի. Օտար երկիրները 8 ֆրանք. վեցամսեան 5 ֆրանք: Հասցէ՝ Teheran Rédaction ASTGH-AREVELAN

«ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆԻ» Խմբագրութիւնը բաց է ամեն օր բացի կիրակի եւ տօն օրերն:

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով. իւրաքանչիւր տողին 1 շահի:

**Րաֆֆի ընկերութեան տնօրէնութիւնը կը ծանուցանէ. թէ առաջիկայ կիւրակէ Մայիս 12-ին պիտի կատարէ. անմոռանալի Րաֆֆիի Մահուան 8-րդ տարեդարձի հոգեհանգիստը Ս. Գէորգ Եկեղեցում առաւօտ ժամը 11-ին:**

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգահասութեան մի նոր միջոց. Հայկական հարց. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.----Կեանքի պատկերներ կանանց շրջանից. Նամակներ խմբագրութեան. Թղթակցութիւն Աստղ-Արեւելեանի. Նամակ Շամախիից. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.----Նշանք ժամանակի. Աստղ-Արեւելեանի պատասխաններ. Յայտարարութիւններ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Դիլլոնի Նամակը.

## ԱԶԳԱՀԱՍՈՒԹԵԱՆ ՄԻ ՆՈՐ ՄԻՋՈՑ

----

Այսքան տարիների, մանաւանդ վերջին երկու տարուան Հայերի տուած անթիւ զոհերը, և սոսկալի կոտորածները, որոնք, աշխարհս ծայրէ ծայր թնդացրին և սարսափի մէջ գրին. նոցա 200000 կիսամեռ, մերկ անօթի ու թշուառացած որբերը, որ նոյն իսկ այսօր քաղաքից քաղաք թափառելով մէկ կտոր հացի համար հոգի են տալիս, նոցա նահատակուած եղբայրների երակներից վազող անմեղ արեան գետերը, հազարաւոր մահմեդականացածների թըշուառ ու անտանելի դրութիւնը, վերջապէս Տաճկաստանի քրիստոնեաների հալածել, բնաքարել, չարչարել, խողխողել, հազարներով կոտորել և մեռնելը կարծես թէ դեռ չկարողացան յագեցնել բանակալ կառավարութեան վրէժխնդրութեան ծարաւը, որով նա ջանանում էր դեռ ևս ազգահասութեան նորանոր միջոցներ գտնել որոնց մէկն է նաև բոլոր ամերիկացի, անգլիացի և Ֆրանսիացի միսիոնարներին և հայ գործունեայ կղերին Հայաստանից հեռացնելը: Որովհետև նա քաջ գիտէ թէ դոքանք են միայն խեղճ և անտէրունչ հայերի թշուառութեան և մահուան ականատես վկաները, դոքանք են Արեւելքի մութ և խաւար խորքերից արեւմտեան լուսաւոր աշխարհը լուրեր և տեղեկութիւններ հասցնելու միակ և հաստատուն միջոցը, հետևապէս Թիւրքիոյի միահեծան պետը վճռեց նորանոր հրովարտակներ հանել բոլոր միսիոնարների արտաքսման համար, որից յետոյ խեղճ հայերը պիտի կախուէին թիւրք փաշաների և պաշտօնակալների ամենաբարձր ողորմութիւնից....

Ինչպէս հաստատում են եւրոպական մամուլները, այդ սպառնացող իրադէն մինչև անգամ Սուլթանի ստորագրութիւնը կրելու բարձր պատիւն էլ արժանանալով, քիչ էր մնացել որ եւրոպական քաղաքական խառնափնթոր և խճճուած դրութիւնից օգտուելով լոյս աշխարհ դուրս գայ և վերջին ու կատարեալ միջոցը տար, քրիստոնեից կատաղի թշնամի թիւրք խուժանի ձեռքը իրենց վրէժխնդրութեան կատաղի ծարաւը յագեցնելու համար. սակայն այս միջոցին, թէև Դանգալոյի արշաւանքը արեւմտեան ազգերի ուշադրութիւնը Ռոսֆորի ափերից Սուդանի անապատնե-

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԴԻԼԼՈՆԻ ՆԱՄԱԿԸ

----

1895-Օգոստոս ամսայ The contemporay Review ի մէջ լոյս տեսած հռչակաւոր Դր. Դիլլոնի «Հայաստանի վիճակը» խորագրով ընդարձակ եւ հետաքրքրի յօդուածը, մինչեւ այս օր հայ թերթերում չտեսնելով, Աստղ-Արեւելեանի աշխատակիցներից մէկը ձեռնարկելէ թարգմանել այդ, որը մաս մաս պիտի դրուի թերթիս մէջ: Խմբ.

----

Պատմում են, թէ մի պզտիկ աղջիկ վախենալով մութ ժամանակ իւր անկողնում մնալ, խնդրումէ մօրիցը, որ ճրագը թողնէ վառ մինչեւ որ նիրհը իւր վրայ գայ՝ «ինչո՞ւ ես վախենում, հրեշտակս» հարցրեց հաստատամիտ մայրը մթութիւնից» պատասխանեց պզտիկը. «բայց ինչը միթէ, Աստուած այս մնում ու քեզ մօտ է, որ ինչն ըստինքեան ծըրագէ եւ յոյս եւ թէ ամբողջ գիշերը քո վրայ պիտի հսկէ» Այս վարդապետական խօսքերին յաջորդող լռութիւնը, կարծել էր տալիս թէ սպասած ազդեցութիւնն արեց պզտիկի վրայ սակայն այդ լռութիւնն ընդհատեց երեխի մեղմ եւ քաղցր հետեւեալ խօսքերովը. «Որեմն Մայրիկ, խնդրեմ ճրագը թողնես իր տեղը եւ Աստծոյն տանես»: Այսպէս է հայոց բռնած դիրքն էլ հանդէպ Արեւմտեան եւրոպայի մարդասէր ժողովուրդներին, (որոնք յու գիտեն պնդակ խոստանալիքներից եւ չարչարանքներից ու արհաւիրք կոտորածների դէմ, միայն արդարացի խօսքերով յայտնել իրենց սրտմտութիւնը եւ քաղաքական համակրութիւնը) շատ է նմանում նոյն միամիտ երեխի մօտաւոր պահանջին «Ձեզ կրաշխենք, ձեր այդ քաղաքական համակրութիւնը, եթէ միայն մեր կենաց եւ ինչից ապահովութիւնը երաշխաւորէք,» ասումէ երախտագէտ հայը:

Բայց անկողմնակալ աշխարհահանեանը այնպէս ծանօթին երկրի եւ ժողովրդի սոսկալի դրութեան, բնականապէս մի քայլ առաջ պիտի գայ, անվախ, հաստատելու թէ հասարակաց ժողովներում թափած համակրական խօսքերը ինչպէս լինում են անգրիայում եւ նոցա ընկերացող թոյլ անգործունէութիւնը, չէ թէ միայն ամենատառապական օգնութիւնն էլ չի անել, այլ արդարեւ աղէտալից էլ կը դառնայ: Անցեալում թիւրքերը միայն աստուծէին հայերին եւ որ Սասունի արհաւիրք կոտորածը ապացուցանում է նոցա բուռն զգացումը իսկ այս օր, նոցա (թիւրքերի) վրա թափած իրանց զոհերի եւրոպացի քաղաքականների դատն խօսքերից, առումեն մինչեւ անգամ Հայաստան բառը, եւ ոչ մի անգթութիւն բաւական չեն համարում իրենց նախատած ինքնասիրութիւնը գոհացնելու համար:

Վերջերս, երբ էվանգելիի օտար հիւպատոսները մի ալ ասել կարգի անարդարութեան համար բողոք ներկայացրին տեղի Վալիին (կառավարին), այսպէս պատասխանեց նա թէ թիւրք կառավարութիւնը եւ հայ ժողովուրդը իրանց յարաբերութիւններումը անմեն այս եւ կենաց, եւ օտարականների կողմից աւելի խոհեմութիւն կլինի որ կենաց չարչարանք կամ ինչեւէ տեսնելիս չմիջամտեն: Այս պատասխանը շատ ճշմարիտ է, որովհետեւ եթէ այդ գոյգին միջամտելէ միայն ապրել. անգամ այլ կարող է անհնարաւ եւ յարմար ժամանակը որոշել անօգնական ընկերոջ վրայ թափելու իւր բուռն ցասումը եւ իսկապէս թիւրքահայաստանումնէլ ամեն ինչ այսպէս է կատարում.........

Նոյն իսկ Ռուս Փաշա եւ Անգլիա գործակալների աչքի առաջ էր, որ Մուշում բանտարկեցին բոլոր այն անձինք որ նոյ յանդգնել էին հօր ակերութիւնն ի ներկայացուցիչների առաջ ճշմարիտ վկայութիւն տալ սոցա պաշտպանութեան համար եւ ոչ մի ձայն բարձ-

